ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Իջևան «24» 01 2020թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա և «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ (այսուհետ՝ Քոլեջ) ի դեմս տնօրեն Հ. Բրուտյանի, որը գործում է Քոլեջի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով ՀՀ Տավուշի մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացումը և աշխատաշուկայի համալրումը միջին օղակի մասնագետներով, համաձայնեցին հետևյալի մասին.

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կողմերը կարևորելով աշխատաշուկայում մրցունակ մասնագետի պատրաստման և կրթական համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումների անհրաժեշտությունը, ելնելով այն հանգամանքից, որ հաստատությունների կամավոր համախմբումը հնարավորություն կընձեռնի համատեղ ուժերով նպաստել սոցիալական գործընկերության փոխազդեցության շրջանակներում պատրաստելու և վերապատրաստելու միջին օղակի մասնագետներին նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝ ոլորտի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Կողմերը, համապատասխանաբար կնքելով սույն համագործակցության հուշագիրը, ամրագրում են սահմանված նպատակին հասնելուն ուղղված իրենց պատրաստակամությունը:

Սույն հուշագիրը միջոցների հատկացման պարտավորագիր չէ: Այն ցանկացած Կողմի համար օրենքով պարտադրվող պարտավորություն չի համարվում, կամ իրավունքներ չի տրամադրում որևէ այլ Կողմի համար:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կողմերը սույն Հուշագրի շրջանակներում պատրաստակամ են.

2.2 նպաստել Տավուշի մարզի զբոսաշրջության SS, ճշգրիտ ճարտարագիտության և գյուղատնտեսության ոլորտների տնտեսական զարգացմանը և խթանել գործազրկության նվազեցմանը,

2.3. պատրաստել զբոսաշրջության SS, ճշգրիտ ճարտարագիտության և գյուղատնտեսության ոլորտների միջին օղակի բարձրակարգ մասնագետներ՝ զարգացնելով տվյալ ոլորտի մարդկային ռեսուրսները,

2.4. աջակցել հաջողությամբ ավարտած մասնակիցներին բուհում շարունակական կրթությանը և/կամ աշխատանքի տեղավորմանը,

2.5. ապահովել անհրաժեշտ պայմաններ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության, որակի բարձրացման և նրանց հետագա աշխատանքի տեղավորման համար,

2.6. նպաստել ԵՊՀ ԻՄ-ի և Քոլեջի գործունեության լուսաբանմանը,

2.7. նպաստել նորարարական տեխնոլոգիաների ներդմանը,

2.8. կազմակերպել Քոլեջի ուսանողների հանդիպումներ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցների հետ,

2.9. ուսանողների մոտ ձևավորել ԵՊՀ ԻՄ-ի հանդեպ գրամիչ իմիջ և մոտիվացիա հետագա գործնական ուսուցման համար,

2.10. ձևավորել թիրախային խմբեր ըստ ԵՊՀ ԻՄ-ի կողմից պահաջարկված մասնագիտությունների,

2.11. իրականացնել միջին օղակի մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը,

2.12. կատարել այլ գործողություններ սույն Հուշագրի շրջանակներում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,
- որակի վերահսկում,
- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

4.1. Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել համագործակցության ընթացքում հայտնի դարձած յուրաքանչյուր տեղեկատվություն:

4.2. 4.1. կետով նշված պահանջը չի գործում այն դեպքում, երբ տեղեկատվությունը գաղտնազերծվում է լիազորված անձանց կողմից:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1.Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

5.2.Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և դառնում նրա անբաժանելի մասը:

5.3. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

5.4. Սույն Հուշագրի վերաբերյալ Կողմերի միջև ծագած անհամաձայնություններն ու վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

5.5.Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԵՊՀ ԻՄ	Քոլեջ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան ՈՒսանողական 3	ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ Հասցե՝ Տավուշի մարզ, ք.Իջևան Նարեկացու 5
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Մակարյան Կ.Տ.	Տնօրեն Հ. Բրուտյան Կ.Տ.